



Շ Ա Յ Ա Թ Ա Թ Ե Ր Թ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ե Ի Ա Յ Լ Ն

ԲԱՃՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Սկզբով 33րդ տարեշրջանի (1917 օգոստոս-1918 յուլիս) բաժնորգրանին 5 20 ֆրանգ. Թիւրքիաի և Պարսկաստանի համար 10 ֆրանգ, ԿԱՆԻՒԿ: Ամսական բաժնորգրանին 5 2 ֆրանգ. Թիւրքիաի և Պարսկաստանի համար 1 ֆրանգ. Նամակ կամ դրամ լրկելու Մ. PORTOUKALIAN

Directeur du journal Armenia  
MARSEILLE (France)

ԼԳՏԱՐԻ

ԹԻՒ 29

1917 ԴԵՏՃԿԵՄԲԵՐ 26 ԴՅ.  
(2. S. 1917 ԴԿԿԱՍԵՐԻ 13)

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, համառոտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւնները: Գրողները չեն վերագրուելու չհրատարակուած ձեռագիրները: Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Ծանուցման 1 միլակ գիրը 1 սանդղիմ կարծէ: 1 գիրտոյրը 2 սանդղիմ: Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction: Place Alexandre-Labadié, 17

ԲՈՎԱՆ ԳԱՅՈՒԹԻՒՆ

Հայ մամուլը. — Ուսումնասիրելի Համագումարը. — Կովկասի հայ փախստականների վիճակը. — Ուստիա կարգիլի Թիւրքիայից երթուածները: — Մ. Գուցակ հանգանակութեան Ազգային Միութեան. — Հայերը հողատիրական Հնդկաստանի մէջ. — Երուսաղէմի առևտուրը: — Ուստիա. — Պատերազմական լուրեր. — Զանազան լուրեր. — Առողջապահական (Երիտասարդներու). — Նոր ստացուած հրատարակութիւններ. — Ծանուցումներ:

ՄԵՐ ՄԱՄՈՒԼԸ

Հայ գրականութիւնը, մասնաւորապէս լրագրութիւնը կոկոսի կորսնցնել հեռագրութիւնը իր գաղափարական փոփոխութիւնը, իր վճիռ հոգին, անկեղծութիւնը, հակասակ որ մեր քաղաքական կեանքի մէջ այդ փոփոխութիւնը գէթ մաշակաւի մը արդարացի պատճառներ գեռ չեն գոյացած:

Միևնոյն է հայրենի կացութիւնը. սարկութիւնը գեռ կը խամբեցնէ մեր հոգին, կոտորածները գեռ կը շարունակեն մանրի, փշրել մեզ. մէկ խօսքով տակաւին բանութիւնն է որ կիշխէ, կը խեղդէ:

Տակաւին կէս դար առաջ հայ գրականութիւնը երբ սկսու վերածնութեան նոր թափ մը ստանալ, եզրամենաճգրիտ հայրիւն մեր ցաւալին իրականութեան, ան ցարացոց հարգատրէն մեր վիճակն ու պահանջները:

Մաքուր էին այն ասան հոգիները, հերոսներ էին ամէնքը բիրեղ սրտերով և անընդունակ՝ կեղծ անդրադարձումներու. իսկ ս'եր են հիմա մեր իրիմանները, Բաֆֆինները, Դերենցիները և Պէշիքժաշխանները, Պարոնեաններն ու Գամառ-Քաթիպանները. վերջապէս, Նազարեանները. Արմրունիներն ու Կ. Փանոսեանները որոնք հայ գրականութեան և լրագրութեան ջահակիրները եզան իրենց ասանին, փարոսներ՝ նոր սերունդին:

Վերջին փոփոխիկը քչեց տարածած մտքը այն տիպարներուն որոնց մէջ կրնայինք տեսնել սիրելի և փառահեղ մեր Նախնիքներու գեռ պըլպըլացոյ հոգին:

Մէկ քանի յարգելի բացասութիւններէ դուրս, ներկայիս մեզ կը պակսին հայ կեանքի իրական արտայայտութիւնը պատկերացնող մաքուր գէթեր և նորերը փոխանակ ուղիքի գալու հայ արիւնին զիմաց, ինքզինքնին տուած են աղանդական ապականուած շախմատներու Այժմ կը գրեն, կը գործեն աւելի մտաւրի, ցոյցի հեռագրականութեամբ, քան ճշմարիտ, մաքուր պղպուտութեամբ:

Հայ լրագրութիւնը ուսանց համար սկսած է պոստալիտութեան մարգարան մը գտնուել և ճախածիւնները սկսած են հայ գրականութիւնը սղոզել անհամ նորոյթներով:

Այժմ չեն մտահոգուիր մեր գըր չափները թէ ի՞նչ անուղի պէտք ունի մեր սոված հասարակութիւնը. գուցէ երբեմն իրենք իսկ չեն հաստար իրենց ըսածներուն, այլ գրականութիւն, գործունէութիւն ծախելու համար, իրենց հոգեկոտոր ձեռքով ու խաբարիկ դարձուածներով վերի վայր կը շրջեն տմնէն բացարայտ ճշմարտութիւններն անդամ «Ճախած» համար այժմ կարելի է վեճը նսեմացնել, բարոյականը անբարոյական դարձնել ու օտարաժողով ինքնահասան հոգակել:

Սա կատարեալ անկում մ'է հայ մամուլին համար. հայ մամուլը սկսած է կորսնցնել իր լուրիւնը, իր բարոյական ըմբռնողութիւնը և անոր աստարականացումը սկսած է ծիծաղելի համեմատութիւններ տանել:

Այդ չէ հայ իրականութեան պահանջը և այսպէս չէ որ հայ մտքի հետաքրքրութիւնը պէտք է սնանի: Աւելի նախընտրելի է որ հայ գրականութիւնը տակաւին մարտիրոսանայ իր անկեղծ գաղափարականութեամբ, հայ լրագրութիւնը տակաւին չարչրկուի իր բարոյական մաքրութեամբ, քան թէ հասարակ ապ-

րանքի մը նման «ճախած» ներու և «չարչի» ներու քուհաճուքին գոհուելով աւելի հեշտին գոյութիւն մը փնտռէ:

Մ'եր կեանքը գեռ չէ փոխուած որ անոր արտայայտութիւնը եզրապակներն ալ ձեռափոխուին անոր համեմատ. եղած սայթաքումները անժամանակ կապկոթիւններ են և սխալ ըմբռնուած հեռագրականութիւններ պարզապէս. նայն իսկ ազատ և քաղաքակիրթ երկիրներու մէջ որ մամուլը աւելի փաճառականակն հանգամանք ունենալ կը թուի, մենք չենք տեսնել այն պոստալիտութիւնները, այն ծիծաղելի բէքլամները որոնք կը կիրարկուին այժմ հայ մամուլի մէկ մասէն:

Երայս ամէնուն վրայ, կարծէք մոզովուրդն ալ աւելիատու կը հետաքրքրուի փոխանակ խոստովանանքով և հայ կեանքի ու զգացումներու հարգատար արտայայտումը անոր մէջ փնտռելու:

Հարկ է խոստովանել որ կուտակ ցականութեան ողին իր առաւելութիւններով մէկտեղ շատ մը անշահ թերութիւններ պատուատեսից նոր սերունդի սրտին ու մտքին վրայ մրցակցական խաբարութիւններով և վաղահաս վարդապետութիւններով որոնք հոգ չունին և գծուար թէ ունենան մեր ազգային կեանքի ներկայ հանգամանքներու մէջ:

Մէկը ի՞ թեթեալիկութիւնները. թո՛ղ հայ գրականութիւնը, մամուլը յիմաւրի ցելին մէջ ու մնայ միշտ վեճ գաղափարականութիւն մը մոզովուրդի սրտին մէջ, Հայաստանի հոգիին խորը:

Այդ է մամուլի առաքելութիւնն ու նուիրական ըմբռնողութիւնը. այդ է օրուայ պահանջը:

Թ. ԵՂԻՇԷ

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ինչպէս հրատարակած էինք նախորդ թուին մէջ, Ռուսահայերի Համագումարը երկու շաբաթ Թիֆլիսի մէջ նիստ գումարելէ յետոյ վերջացած էր, ընտրելով կեդրոնական մարմին մը որ ազգային պէս»

գործերը պիտի վարէ մինչեւ յառաջիկայ ընդհանուր համագումարը որ պիտի ընտրուի քուսանդամ ըուէի սիւտէմով:

Այս կեդրոնական Ազգային խորհուրդի կազմը կը բաղկանայ 15 հոգիէ, հետեւեալ կերպով. վեց Գաշնակցական՝ Ա. Ա. հարոնեան, Աբր. Գիլխանդանեան, Ռ. Տէր Մինասեան, Խաչ. Կարճիկեան, Նիկ. Արզապեան եւ Կորիւն Ղազարեան. երկու Սոցիալ Զեդախիւական՝ Յ. Տէր Օհանեան եւ Բժ. Լ. Աթաբէկեան. երկու Սոցիալ Դեմոկրատ՝ Գ. Տէր Ղազարեան եւ Ա. Երզնկեան. երկու Հայ Ժողովրդական Կուսակցական՝ Ս. Յարութիւնեան եւ Յ. Այվազեան. երեք անկուսակցական՝ Տ. Բէգլազեան, Ստ. Մամբիկունեան եւ Պ. Զաքարեան:

Ազգային խորհուրդի դիւանը կազմուած է հետեւեալ կերպով՝ նախագահ՝ Ա. Ա. հարոնեան եւ երեք օգնականներ՝ Տ. Բէգլազեան, Գ. Տէր Ղազարեան եւ Լ. Ա. Աթաբէկեան:

Որոշուած է կազմել նաեւ մարմին մը Ազգային Ժողով անունով որ բաղկանայու է 35 հոգիէ, կուսակցութիւններէ եւ քուսակցութիւններէ անկուսակցացիներէն:

Ազգային խորհուրդը արդէն սկսած է գործի:

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ՓԱԽՍԱՆԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Թաշլի-Չայէն Տ. Մանդինեան հոկա. 25/7 նոյեմբեր ամսաթուով հեռեկալ հեռագրով տուած է Թիֆլիս քաղաքների Միութեան:

«Այն հանգամանքի հետեանքով, որ սովի պատճառով փախստականները գիտում են զէպի Հայաստան, մեծ խուճեր են հաւաքուել Ղարաքիլիսէի, Շահթախի և միւս սընդատու կայաններու: Ամէն օր անցնում են աւելի քան 300 հոգի: Եթեմանում կերակրում են հազարաւորներ. այնտեղ չկան գիշերային օթեաններ և հաց ու այլ մթերքներ չեն վաճառում: Անցնող սոված փախստականների միակ վերկութիւնը հանդիսանում են անդատու կայանները, որոնց գործունէութեան կըրծատուը հաւատարապօր է ոճրագործութեան: Այս ծանր բողէին խնդրում եմ ձեռք տանել բոլոր միջոցները, որ իշխալ կայանները յետադարձ ևս գործեն կանոնաւորապէս»

**ՌՈՒՍԻԱ ԿԱՐԳԻՆԷ**  
**ԹԻՒՐԿԱՆ ԱՅԵՐԻՆ ԱՄԵՐԻԿԱ ԵՐԹԱՆ**

Վլասիֆոսոսքէն Տ. Մելիք Նա. բարեան Թիֆլիսի հայ թերթիին հետագրած է որ խաօի արգիլում է Թիւրքահայերին Ամերիկա անց ճիլ կամ վասիֆոսոսք մնալ:

Հետագրողը առանց պատճառները բացատրելու, թախանձագին խնդրած է որ Թիւրքահայերի Ամերիկա երթալը զարգեցնեն:

**ՎԱՆՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Վանքի սեպտ. 25 8 հոկտեմբերին զրուած է Սալիսառանքին:

Տեղա սկան ֆրանսացի երկու պատգամաւորներ, որոնք իտալացի զինուորներու հետ՝ սրտան խնդիր ներս չարժ և ամէնէն աւելի ուղեցին իտալացի ստական զօրքի վերաբերմանը հանդէպ ֆրանսական ազգին: Չիտալիներէն քանինները տեղա զանաւորներու անուանով լայնարարեցին, թէ իրենք համաձայն են ֆրանսական քաղաքականութեան և ամերիկացիներին շունչ կոչարկողքի պիտի կուտին:

Երկկ տեղա հասան ամերիկացի Մ. կըլէյսին և իր ընկերներ, որոնք միտք անին չափով ընդարձակ զործի մը ձեւանակելու: Ասոյցմ իրենց նպատակն է պարտիլ զօրքերու մէջ և ընդհանրապէս ստամուտիբու: Թիւրքներ ընել տեղին վրայ վաս պարտկանցին տնցած առիտ երախտադատքէն կը լիշէ Ամերիկացիներու, որոնց մէջն էր նաև Մասըր կըլէյսին, բարեբար զործանէս թիւնը և անհամբեր կը սպասէր այս առիտ անոնց զարտեանն: Այժմ երբ նորէն ասոնք երկիր կը գտնուին, ժողովուրդը իրաւունք անի աւելի սերտ կերպով երկիրն կատարու և ապաստու որ Ամերիկացիները պէտք եղած օժանդակութիւնը պիտի ընեն իրեն: Յիշեալները ժողով օրէն նախ անցնելու են Ռատան և յետոյ կամ մարջ, ուր պիտի տեսակցին հրամանատարին հետ:

**Գ. ՅՈՒՅԱԿ**  
**ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ**  
**ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ**

Գոմիժէիս անդամ Տիար Արաւշէս Կիւպէկեանի ձեռամբ Ալցերի մէջ բացւած հանգանակութեան ցանկը:

Տիար Յակոբ Վէմեան եւ որդի	1500
Տիար Տիգրան Վէմեան	500
Քէմախի վարի Բագաւիճ մեծ գիւղէն որոնք Ալժէ կը բնակին այժմ, Տիարներ	
Թորոս Մաստիկեան	125
Ղազար Մաստիկեան	50
Գրիգոր Պետրոսեան	50
Միսաք Գալուստեան	50
Իոխաղբուի	2275

Փոխադրուած	2275
Աղամ Գրիգորեան՝ Օրլէանիլէն	300
Միքայէլ Փայանճեան՝ Ալժէէն	20
Աւետիս Համբարձումեան	50
Արսէն Փայանճեան	100
Արտաշէս Գալուստեան	10
Յարութիւն Ստեփանեան Մոսկուսէմէն	100
Յակոբ Խաչատրեան Քըլիզանէն	300
Գաբրիէլ Թորոսեան	150
Սերոբ Թորոսեան Պիտաւէն	200
Ուն	20
Գումար	3525

Մարտիլէն	
Կարապետ Մուծաֆեան	100
Յակոբ Արիկեան	5
Ուն	20
Էնկիպարեան՝ իր ընտանիքէն բաբի լուր մը առնելուն առթիւ	10
Բենիամին Մրաիկեան	50
Կարապետ Սեֆեան	100
Քէլիսանկարեան	300
Pierre Virabian	1000
Արսէնակ Սալբեան	1000
Հայկ Սալբեան	1000
Գումար	3585

Համագումար	7110
Ա. եւ Բցումցաներու համագումար (տնակ Արսէնիս Լ. Թիւ 11)	13876
Ընդհանուր համագումար	20986

**Մարտի 21 զեկտեմբեր 1917**

Հայ Ազգային Միութեան կողմէ բացուած Հանգանակութեան Գ. ցուցակը հրատարակելու առթիւ, տեղւոյս Գոմիժէն կողմէ յայտնել իր շնորհակալութիւնները ապաստանուն իրաւունքներուն և միանգամայն հրաւիրել զեռ շտանակցող ազգայինները՝ որպէսզի անրոպալ զրկեն մեզի իրենց սրտէն թլխած նաէքները, համեմատելով զանոնք ոչ թէ իրենց անձնական կարողութեան և կամ սրբիներու աւելի կամ նուազ չափով մասնակցութեան, այլ ազգային բազմապահանջ և հրամայողական պէտքերուն:

Մեր ցանկերուն ընթերցումը այս մասին կրնայ լուսազոյն ներշնչուականը զանաւոր ամէն անոնց որոց ազգային զգացումները աւելի բարձր են քան անձնական զիրքի: Հարըստութեան և կամ ալ՝ նկատումները Մի քանիններու 10ով կամ 20ով մասնակցութիւնը բարոյական շատ աւելի մեծ նշանակութիւն մը կառնէ քան մի քանի սրբիներու 100ով կամ 1000ով ասորազրութիւնը եթէ հաշույ զրուի իւրաքանչիւրին նիւթական կարողութեան աստիճանը:

Մենք կը զիմենք բոլոր սրտերու հարատւութեան և կը խնդրենք մեր ազգայիններէ որ իրենց նուէրները ընեն այս սուղութեամբ, առանց ըստախրու որ Գոմիժէիս կողմէ անձնական զիմում ըլլաի իրենց:

<b>Ի զիմաց Գոմիժէին</b>	
Վան Ասենաղբուի	Ասենաղբու
Գ. Շահամեան	Յովն. Սահամեան
Գանձապետ	
Մ. Թէքեան	

Թղթակցութիւնք ուղղել Միութեան ստանապետի հասցէին (1, Blvd. Louis Salvator), իսկ զրամ գանձապետի հասցէին (6, rue d'Areole, Marseille):

**ՀԱՅԵՐԸ ՀՈՂԱՆՏԱԿԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ**

(Շար. 21րդ Թուէն)

Բոլոր ասները, այսպէս, եթէ մեր ունակութիւնը պիտի թող տար մեզի տուն կոչել առանց սանդուխի այս ցած յարկերը, շքեղ ու սիրուն տաղաւաններ են աւելի, ծառայատու զաւարագեղ պարտէզներու խորը թաղում, շուրջանակի կամարագեղ անկաստաններով՝ որոնք կ'արգիլեն տաք օդին մտաքը, զուն արեք ապակեոր և միշտ վանդակապատ պատահաններով, պամպուի շերտիկներէ հիստամ զոյնզոյն վարագոյրներով՝ որոնցմով կը ծածկեն շէնքին արեղզէմ երեսը, և օդաւտումի բուր պայմաններով ճոխացած բարձրաձեւուն լայն սենեակներով՝ որոնց մէջ ոչ միայն տանելի, այլ նոյն իսկ հաճոյական կ'ըլլայ կեանքը: Բնակութեան այս ընդարձակ շրջանէն հետո է բուն մեծ վաճառանցը զոր Հայերը քաղաք կը կոչեն Զուլայի այն սովորութեամբ, որով հոն քաղաք կը կոչեն մտակայ Սպահանը, իրենց առեարական հրապարակը Այդ վաճառանցին մէջ են բոլոր առեարական ասները, զրամասունները, մեծ խանութները, զործանոցները և զործարանները: Կեանքի և շտհո՝ հանգիստի և զործի շրջանակներու այս իրարմէ հետաւորութիւնը, որ զրեթէ նոյն ձեւով կայ Հոլանտական Հոլկաստանի միտ քաղաքներուն մէջ ևս, հետո պահելով ստալիները երկրորդին ժխորէն և անմարտութեանն՝ սանթրոսելի առուելու թիւնն անի անշուշտ, որ մէկ կողմէն զիւրացնելով առեարական զործանութեանց արագ ընթացքը, միտ կողմէն աւելի հեշտ կ'ընծայէ կեանքը, առանց ատոր արդէն իսկ ընկճող ու քայքայող այս կլիմային տակ իսկ զործատեղու և բնակարաններու իրարմէ այս անչափ հեռուորութեան մէջ հասարակցութիւնը զիւրացնելու կը ծառայեն, բայց անհամար ինքնաշարժերէ, շոգեշարժ և ելեքտրաքարշ հանրակառքերը՝ որոնք ամէն ուղիւ թեմալ կ'երթուզարձեն, երկանիւ արագաստ հիւսի կառքեր՝ որոնք կը վիտան ամէն կողմ, ու հեռախօսը՝ որուն զործիքը կայ զրեթէ ամէն տան ու զործատեղու մէջ:

Քաղաքին մէջ, ուր իբր հնու թիւն ոչինչ կայ, բայց 1693ին կառուցուած Հոլանտական հնագոյն և կեղեցիկ մը, այցելութեան ամէնէն կարեոր վայրն է թանգարանը, զը բուն առջև զրուած են պղինձէ վիթխարի փեղ մը, զոր Միամի թագաւորն է նուիրել, և Պորնէյլէն բերուած զոյգ մը անձուտի հին թնդանթիւնը: Ներքը, հնախօս ականբամի որահին մէջ կան պրահամական արձանագրութիւններ և ճալայի

զանազան մեհաններէն բերուած և պատաստական զիցարանութեան վերաբերեալ այլալ առարկաներ:

Ուրիշ սրահի մը մէջ, որ ազգազրտկան ժողովածուներու բաժինն է, կան կուսքեր՝ զէնքեր՝ բնակարաններու մանրատիպեր՝ կարասիներ՝ երաժշտական գործիքներ՝ տեղացի հին ցեղապետներու սոխի թապեր և այլալ երկրական ժողովուրդներու զգեստի նմոշներ և զրամանրու հասարակներ: Միինոյն շէնքին մէջ է մասնագարանը, որուն մէջ կը պահուին մարայական՝ ճալայական և արաբական թանկագին ձեռագործներ, և որուն 20,000 հատորներուն մէջ գտանք երկու հայերէն զիրքեր, Յովհաննէս կաթողիկոսի Պատու թիւնը և «Ռ. զիտրութիւն ի Հապէշխտան» Երուսաղէմատիկ հասարը:

Քաղաքէն իբր 50 քիլոմէթր դուրս, Պուիթէնձօրկ կամ Պօլօր կոչուած առանին մէջ է Բուսարանա կան Պարտէզը յարակից թանգարանով ու զրազարանով, և բուսարանական կենդանորանական՝ երկրագործական ու քիմիական աշխատանոցներով: Այլալայի արեագարձային տունկերու ամէնէն նշանաւոր բուսարանական պարտէզն է այս, որուն շին հասարակ, կ'ըսեն, նոյն իսկ Ալլանի և Սոյլանի մէջ եղածները: Բոլոր բոյսերը անկուած են իրենց ընտանիքի կամ տահմի բնական կարգով: մէն մի տեսակը կը ներկայացուի երկու օրինակներով, որոնցմէ մէկին վրայ բեռնուած է տունկին տեսանաւանը:

Այս պարտէզին կողքին, զէմ լանդիսան շտարուանաւոր մեծ ապարանի մը, որու շուրջի ընդարձակ մարզադեռնին վրայ կը վալլաւան հարիւրակ մը ճալայական եղջերաներ ու եղջերներ, կը կանգնի ընդհանուր կառավարիչին պալատը: Հոս կը բնակի թագուհին կառավարութեան բարձրագոյն ներկայացուցիչը, որ Հոլանտայի բոլոր հնդկական ստացուածքներուն վրայ փոխարքայի պալատը կը վարէ, առանց այդ տիտ, զորին Ալիս անգամ մը կ'իջնէ ան Պաթախա, անձամբ ընդունելու համար ժողովուրդի զիմումները, ու երկու տարին անգամ մը կը շրջի բոլոր կողմները:

Բայց այս ամէնքը, որոնք աշխարհահայրիկներու կամ զիտական նպատակներով այցելողներու հետաքրքրութիւնը կրնան սնուցանել, արագ տպաորութիւն մը կրտահեցնեն միայն իմ անցորդի նպատակով մտնողներու պաշտօնի պատմութիւնը: Բուն պաշտօնիս պատմութեան թանգարանը մարտիկոսի կուտած Պաթախայ Հայութեան անցեալին ու ներկային հետազօտութեանը, եւ թէ կարելի է այդպէս սրակից քանի մը օրերու ընթացքին մէջ կատարուած հապճեղ պրպտումներու գործը ինչպէս տկարակուեցաւ զրուսութեան սկիզբը, ճալայի մէջ առաջին անգամ Հայեր պէտք է ապրած

ու գործած բլրան տեղի քան երկու ք...  
ակն գար առաջ, այսինքն Հո...  
լանական արտապետուհին քիչ լե...  
տայ, առնուազն ժիշ. դարուն առա...  
ջին կիտուն Անկարիցի էր արդարև  
որ այդ թուականին բառական առաջ  
Սպանիացւոց հետ մինչև փրկուպեան  
կողմնորդը և աւելի կանուխ Քոր...  
թուկայիններուն հետ մինչև Սիամ,  
Քոչին, Չինաստան երթեկող և  
Մարակայի մէջ հաստատուող Պու...  
ղայիցիներ անտեսէին վաճառակա...  
նութեան համար այնքան խոստովա...  
լից ճափայի այս գաշարը, երբ Հս...  
լանտայիք, որոնց հետ միշտ աւելի  
սերտ յարաբերութիւններ ունեցած  
էին իրենք, Թայրազոն Արևելքի  
ճամբուն վրայ եւրոպական ազդեցու...  
թեան գաւազանը ձեռք անցնելով,  
իրենց նախորդներու լսկ առևտրա...  
կան կայաններուն փոխարէն, զազ...  
թային ծրագրերը կ'իրագործէին  
կողմին բոլոր մեծ քաղաքներուն  
մէջ, սկսելով Պարթիսիային:

Այդ շրջանի Հայերէն, ինչպէս Ը...  
սինքն, զժողովարար ոչինչ մնացած  
է իբր յիշատակ կամ յիշատակարան...  
անսպառ արդիւնաբերութեան այս  
կայս գեանին վրայ սակ հարստա...  
նալու և վաճառաշահութեան մար...  
մալէն տարուած, անտէք չեն գիտ...  
ցած կամ չեն կրցած խորհիլ օտա...  
բութեան մէջ իրենց ազգային ինք...  
նութիւնը մշտնջենաօրբ միջոյց...  
ներուն վրայ, ու իրենց մասին պահ...  
ւած տարտամ աւանդութիւն մը հա...  
ղիւ թէ կրցած է, զարտուկէս յետոյ,  
հրախրել արեւնակիցներու նոր սե...  
րունք մը կեանք ու յարստ փորձե...  
լու, անհետացած նախնիքներու  
հարթուած հարակոյտներուն վրայ:

Գաղթային շարժման երկրորդ շրբ...  
լանը սկսած է այսպէս ժիժ գարու  
առաջին տարիներուն, բարեբախտա...  
բար այս անգամ տարբեր կերպով Ազա...  
դէորդ Մանուկ Մանիկարեան, այս  
երկրորդ շրջանին հիմնադիրը, որ  
Մատրասէն կուգայ այդ թուակա...  
նին, իրեն հետ բերելով չորս միլիոն  
Փրանքի այն տաննաւան համար ա'լ  
աւելի պատկառելի հարստութիւն մը  
և հեռուորդ Հայերու փոքրիկ թիւ...  
մը, միտին բերած էր նաև կենսա...  
լից մասնիկ մը ազգային կեանքի  
այն նախնական ոգիէն, զոր հոն'  
Հնգկահայութեան երբեմնի այդ փա...  
ռուօր ստանին մէջ՝ կրցեր էին  
կերտել Ազա Պեւրոս Ոսկանի, Ազա  
Շամիր Շահմիրեանի, Յարութիւն Քհ...  
Շմաւնեանի, Եղսարդ Ռափայէլ  
Ղարամբանի և Սամուէլ Մուրատի  
նման ազգասէրներ, Այս պատուա...  
կան Հայուն միտքը առաջին օրէն կը  
թափ գրաւուած ըլլալ բարձր խոր...  
հարկով մը Մատրաս եղած առե...  
նէն, տեսած էր թէ ինչպէս Հնգ...  
կահայ մեծատուններու զուակները  
բարձրագոյն կրթութիւն մը ստա...  
նարու համար Լոնտոն երթալով, հոն  
կը կորսնցնեն իրենց մայրենի լեզուն

և ազգային զիտակցութիւնը, և կը  
փափաքէր, այս ազգային առաջն...  
տունիւ համար, իր ամբողջ հարբ...  
տութիւնը յատկացնել բրիտանական  
մայրաքաղաքին մէջ իսկ հիմնելու  
համար Հայկազնեան ճեմարան մը,  
ուր օտար լեզուաց և բարձր գիտու...  
թեանց հետ ուսուցուէին նաև հայե...  
րէնը և ազգային զիտութիւնները:

(Շարունակելի)  
ԹՈՐԳՈՄ Եպիսկոպոս:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՌԵՆՆԵՐԸ ԱՌԱՋ**

Հոստի շիտէա նացիոնալէս յրա...  
գիւրը կը գրէ թէ եկեղեցական շրբ...  
լանակներին մէջ լուր ստացուած է  
որ թիւրք և գերման զօրքերը Ե...  
րուսաղէմէն հեռանալէ առաջ խրժ...  
դժութիւններ և կողպուսներ ըրած  
են. փրկչի Ս. Գերեզմանին համբա...  
ւարդ գանձը, որ շատ մը միլիոններ  
կարժէր, կողպուսներ և գողցուած  
հարստութիւնները Պէրլին զրկուե...  
ր են եղեր: Այդ գողցուած մէջ կը  
գտնուին շատ մը թանկագին առար...  
կայներ որոնք զանազան ազգերէ և  
իշխաններէ նուիրուած էին. ի միջի  
այլոց այն ոսկիէ լամպը որ Արքայ...  
էմմանուէլ Բ. թագաւորը նուիրած  
էր:

— Հոստէն հեռագրուած է գեկ...  
21ին:

«Իրազեկ ազգերէ հաստատուած  
է որ լատին պատրիարքը ձերբա...  
կալուեր և բռնադատուեր է Երու...  
սաղէմէն հեռանալու Պատիւրաթիւօր...  
իշխանին ծառայող սպայն զինք նա...  
զարէթ տարեր է եղեր: Պատրիար...  
քին խորհրդական եպիսկոպոսը, չը  
նայելով իր յառաջացած տարիքին և  
առողջական խախտա վիճակին, Դա...  
մասկոս աքսորուեր է. ճանապարհին  
շատ նեղուած և ուժասպառ եղած  
լինելով, հոն հասած առան մե...  
ռեր է:

Թիւրքերը նոյնպէս բռնի իրենց  
հետ տարեր են օրթոսոքա Յոյներէ  
պատրիարքը և իր խօսքը պակտն...  
ները, Հայերի պատրիարքը և Ղըդ...  
ախների արքեպիսկոպոսը: Հրեայնե...  
րի բարձունագետը որ ի սկզբան Դա...  
մասկոս աքսորուած էր, կրցած էր  
Երուսաղէմ վերադառնալ:»

**ՌՈՒՍԻԱ**

Պրէստ. Լիդսվաքի մէջ գեկու 15ին,  
մէկ կողմէն Ռուսիաի և միւս կողմէն  
Գերմանիաի, Աւստրիական Գերմանիաի,  
Պոլիւարիաի և Թիւրքիաի պատուի...  
րակներին միջև, ստորագրուած գի...  
նագաղարի պայմաններին համեմատ,  
Ռուսիաի և Թիւրքիաի միջև պա...  
տերազմական գործողութիւնները  
զադրուած են թէ՛ ծախի և թէ՛ ցա...  
մաքին վրայ. զինուորական շար...  
ժուաներ չպիտի լինին և ամէն բան  
պիտի մնայ իր ազգի վիճակին մէջ  
մինչև խաղաղութեան կնքուելը. զօր...

քերը կրնան իրար հետ եզրայրա...  
նալ և սեռակցել, բայց որոշ թուէ մը  
աւելի մէկտեղ չգալով, և այլն:

— Փարիզէն գեկու 20ին Մար...  
սէյլի օրաթերթերին տրուած հեռա...  
գրէ մը կը քաղենք հետեւալ տ...  
ղերը:

Զօրավար Գալէտինի զօրազնե...  
րը կը շարունակեն կուռիլ խրիմի...  
սահմանադիրն վրայ: Պետրոգրա...  
դէն զրկուած զօրքերին դէմ:

Կովկասի մէջ, Հայերը չեն ընդու...  
նիր եղբայրանալ թիւրքերին հետ:  
Ռ. քրանիաի Բատան (Երեսփոխա...  
նական մարտի զօրքեր կը զրկէ Օ...  
տէսա պոչէֆերներին դէմ:

Չէքոսլաւների երկու զօրաբաժին...  
ներ կը պահանջեն որ իրենք զրկը...  
րին Դաշնակիցներին ի նպաստ  
կուռելու:

**ՊՍԵՐՍՈՂՈՒԿԱՆ ԼՈՒՐԵՐ**

Ֆրանսական սաղմաճակատին վը...  
րոյ առայժմ նշանուոր բան մը չկայ:  
Սոփրականին համեմատ թիւզանօ...  
թաճգութիւններ կը շարունակուին  
երկու կողմէն և այս ու այն սեղ...  
փոքրիկ ընդհարումներ կը պատա...  
հին, Գերմաններին իրենց կորուստ...  
տեղեր վերագրուելու համար կա...  
տարած ջանքերն ու օգուտ մնացին:  
Ռայց կըսուի թէ վերջերս մեծ յար...  
ձակողականի մը համար պատրաս...  
տութիւն կը տեսնեն Գերմանները և  
Ռուսիան իրենց զօրքեր կը փոխա...  
դրեն այս կողմ: Եթէ արագիտի մի...  
բան պատահի, Գերմանները ֆրանս...  
կանգլիական զօրքերի քաջութեան  
մէջ նոր ապացոյցն ալ պիտի տես...  
նեն մեծամեծ կարաստների եւ թարկ...  
ներով: Այս կողմէն պէտք եղած  
պատրաստութիւնները տեսնուած են  
կանխազգուշութեամբ:

Աւստրիական զօրքերը քանի օ...  
րէ ի վեր կատարի ջանքեր կրնեն...  
Պրէզիտի և Բիալիսի միջև յառաջա...  
նալու համար, բայց իտալացի երի...  
դիմադրութեան առջև սնչօր մնա...  
ցած են ցարդ, թէև իրենց խոշոր...  
թիւզանօթներ բերած շարած են հա...  
բայց չեն կրցած իրենց յպատակին  
հասնիլ, որ էր իջնել գաշար և յառա...  
լանալով երթալ դրասի վեհտիկը,  
Ազրիականի թաղու հին:

Արևելեան Ալիւրիէի մէջ Գերման...  
ներն իրենց ունեցած գաղութները  
զրէթէ բարձրովն կորսնցուցած էին  
նեղկայ պատերազմի միջոցին, Զօրա...  
վար վան Տէվէնտէրի տուած սեպե...  
կութիւններին համեմատ, այդ գա...  
ղութները վերջին ալ ու ցած է այժմ  
Անգլիացիներէ և Պլիմիլի ձեռքը:  
Գերման զօրքերը կամ գերի ինկած  
են կամ սպանուած կամ հետուցած:  
Մնացած է միայն վաքիլի ջոկատ մը  
որ վախած է վերթալ կորստան հողին  
վրայ ուր միջոցներ ձեռք առնուած  
են զինք պաշտպանու և նեղը ձգելու  
համար:

**ՉԱՆՍՉԱՆ ԼՈՒՐԵՐ**

Միջազեռքի անգլիական զօրա...  
բանակի ընդհանուր հրամանատար  
Սըր Սըլէյլի Մօս գոյրաւէն բանը...  
ւելով մեներ է:

— Գանատաի Ալիֆուր քաղա...  
քի նուահանգիտան մէջ մեծ աղա...  
մը պատահած է գեկու 15ին: Ռայ...  
մամթերք բեցած ֆրանսական շո...  
գենալի մը և ստանտիզէն փոխօգ...  
րող նարվէկեան չպիտի մը միջև  
բաղխուած մը պատահելով սակալի...  
պայթում մը առաջ եկաւ որ քա...  
քին շատ մը շէնքերը քանդեց: Հ...  
ղարատը մարդեր սպանուեցան և  
վիրաւորեցան: Հրդեհը կ'ոտուգ...  
բար տարածուեցաւ չորս կողմ շտեր...  
բոցաճարակ ընելով:

— Գերմանիաի Ֆրանկֆորդ քա...  
ղաքին մօտ գտնուող կրիշէմ Էլէ...  
դրանի գործարանը որ քիմիական  
նիւթեր և սպանալիք պատրաս...  
տող ամենամեծ գործարաններէ մին...  
է աշխարհի մէջ, նոյեմբեր 22ին  
յանկարծակի պայթումով մը քարու...  
քանդեցաւ, եր աւերակների տակ  
թաղելով հարիւրաւոր փորձառու...  
գործաւորներ և մանուղէտ արհես...  
տաւորներ: Այս կորուստը մեծ ճա...  
կատարաւ մը մէջ յաղթուելէ ա...  
ւելի աղիտաբեր եղած է Գերմանիաի  
համար:

— Նիւ Եօրքէն հեռագրուած է  
գեկու 17ին. «Եթէ պէտք եղած  
ամուսը չորուի այս իրիկուն, 125  
գալոց պիտի փակեն իրենց գուռ...  
ները, վառելիք չունենալու պատճա...  
ռով: Յարաւ շատ ստափիկ է և հա...  
գարաւոր զբառենականներ ու բնա...  
կարաններ վառելիքէ զուրկ մնա...  
ցած են:

Տեղական իշխանութիւնների տը...  
ւած բացատրութեան համեմատ, ձե...  
նի սաստի կիտթորիկը որ տեղեց մի...  
քանի օր, ամուսի պակսելուն պատ...  
ճառ եղեր է որովհետև երկաթուղի...  
ները ծածկուեր են ձիւնով և կարե...  
լի չէ եղեր պէտք եղածին շափ ա...  
ժուս փոխադրել:

**ԱՌՈՂՉԱՊՈՆՉԱՆ**

Երեսասարդներուն

(Շար. 21րդ թուէն եւ վերջ)

Գաղով անոնց, որոնք կըսեն թէ չեն  
կրնար ինքզինքնին զսպել, այս կէտն ալ  
պէտք է լրջօրէն նկատի առնել:  
Կընդունիմ թէ կամքի ուժը անհաս...  
անհաս կը տարբերի, թէ զգացումներու  
սեռակէտէն ալ մարդիկ տարբեր են բայց  
գիտեմ ալ որ եթէ մարդ փափաք ունե...  
նայ, անկարելի բան մը չէ զգացումները  
զսպել և կանտուարել:  
Ինչպէս ամէն զգացում, նոյնպէս և ա...  
ւելի սեռային զգացումը ունի բնագոյն  
տարբեր, որու վրայ կուգան աւելնալ մեր  
միջավայրի ազդեցութիւնները, այդ բը...  
նագըր աւելի զրգուելով: Այժմու զրոյնտ  
և տարփոտ երեսասարդը՝ ժամանակին

այդպէս չէր. իր սեռային զգացումը զըր-  
դառող խօսակցութիւններ լսելով, գրութիւն-  
ներ կարդալով և դանազան տեսարաններու  
ներկայ ըլլալով, աստիճանաբար պօրացած  
է այդ բնագոյրը և անկարելի դարձած կա-  
ռավորութիւնը: Ահա՛ այս կէտը պէտք է որ  
լաւ ըմբռնուի: Ամէն սովորութիւններու  
նման, սեռային բնագոյրը ալ կարելի է դե-  
կալարել և ուղղել: Ինչպէս որ գործերը  
կրկնուելով սովորութիւն կը դառնան, և  
սովորութիւնները շարունակուելով բնաւո-  
րութեան կը վերածուին, այնպէս ալ, որ-  
քան խորհուրդ այս զգացումի մասին, այն-  
քան ալ կուտեղեյայ և մեր ուժերը կապա-  
ռէ: Երջանքը չէ՛նարդօք ծխելու և խմելու  
ունակութիւնները: Ասկայն շատ մը ան-  
հասներ կրցած են իրենց ծխելը և խմելը  
դադրեցնել և եթէ ուրիշներ չեն յաջողած,  
պատճառը այս է որ կամ պէտք եղած փա-  
փաքը ունեցած չեն և կամ խիստ չափա-  
զանցութեան մուտք ըլլալով՝ չեն կամե-  
ցած ինքզինքնին զսպել:

Քանի որ այս զգացումին զօրանալը,  
շատ մը պայմաններու նման, կրկնուելի և  
սովորութեան արդիւնք է, ուրեմն մարդ  
աշխատելու է զայն սովորութեան չվերածել:  
Մէկու մը համար աւելի դիւրին է ժուժ-  
կալ մնալ, երբէք սխալի մէջ չիջնալ, քան  
մէկ անգամ ինչալ, փորձութիւն ունենալ:  
Այս նպատակին հասնելու համար, պէտք  
է միջավայրը զուգուցութեամբ ընտրել, զգու-  
շանալ լսելը և զրգոտող գրութիւններ կար-  
գալէ, հետո մնալ չար և անմաքուր ըն-  
կերներէ և տեսարաններէ: Մանաւանդ ըն-  
կերներ յաճախ պատճառ կըլլան մարդոց  
իշխուելու: Յաճախ ընկերներ կրօնն. «սո-  
ւորէն» կը վախնաս. ուրեմն դուն մարդ  
չես. այդպէս կոչխատին անոնք անփորձ  
երիտասարդը փոքր ձգել: Եթէ ոնէ մէկը  
կը զրդէ քեզ այդ կեանքին, այդպիսին  
կամ տղէտ մըն է և խորուած, և կամ չա-  
րակամ մըն է որ չուզեր քու կանգուն  
մնալը տեսնել քանի որ ինք պրդէն ինկած  
է:

Փորձութեան խուսափելու և անոր պա-  
տեհութիւն շատու կարեւոր միջոց մըն է  
նաև միտքը և մարմինը ուրիշ դրողուն-  
քով շահագրգռելու: Երիտասարդութիւնը  
խանդով և եռանդով լեցուն տարեշրջան  
մըն է. այդ տարեշրջանին, կարծես արիւ-  
նը կեռայ և կուսանայ պոռթկալ: Պարսպ  
միտքը և պարսպ ձեռքերը սպարդիւն և  
ձեռասակար միջոցներու կը զիմեն՝ դրողե-  
լու համար: Իր ստորեայ դրողունը զար-  
ձոց գործաւորը, եթէ ուրիշ ընկիւք մը  
չունի, սխալ և հեշտ ճամբաներէ երթալու  
հակամէտ կըլլայ. պէտք է զրողում մը,  
խաղ մը հայթայթել, և սակաւ ամէն մարդ  
ինքն իրեն համար ընտրելու է որքան ա-  
տեն որ Հայը ի վիճակի չէ հասարակաց  
դրօնանքի վայրեր ունենալու այս պան-  
զուխտ երկրին մէջ:

Քերես առարկուի թէ բնու փորձառու-  
թիւն չունեցող մը կրնայ այդ միջոցներով  
ինքզինքը հետո պահել. սակայն մէկը որ  
անցեալին մէջ կամայ սկիւմայ այդ սխա-  
լին անձնատուր եղիլ է, անիկա չի կրնար  
այլ ևս ինքզինքը հետո պահել անկէ:  
Այդպիսի առարկութիւն ընտրելը կամ  
կը կեղծեն, կամ կը ստեն և կամ կուրա-  
նան մարդուն կարողութիւնը: Ինչո՞ւ կա-  
րելի չէ. արդեօք տեսած չենք այն տե-  
սակ երիտասարդներ որ առողջ եղած ատե-  
նին կրակին թէ ետ չեն կրնար մնալ ա-  
տենի մարտիկներէ, և սակայն հիւան-  
դութեանց մասնէլէ ետք, երբ բժիկը ար-  
գիլած է զանոնք, այն ատեն կրցած են  
ամիսներով և նոյնիկ տարիներով հետո  
մնալ. և սակաւ պոռթկող չէ եղած. իրենց  
առողջութեան չլիստելէ զատ՝ սատարած  
ալ է: Մէկը որ սեռային պարզ հիւանդու-  
թիւն մը ունեցած ատեն կրնայ ետ կենալ  
մուրթիւնէ մը, կրնայ նաև հիւանդութիւն  
չունեցած ատեն ալ հետո մնալ ստիկէ,  
միայն պէտք է որ փախաքի և կամի:

Ամփոփելով կրօնքը. —

1. Դուժկարութիւնը առողջութեան չի  
փնասեր:
2. Դուժկալ մնալը ծննդական գործա-  
րաններու սկիւրացումին պատճառ չի կըր-  
նար ըլլալ քանի որ անոնք բնութեան  
օժտում են ինքնարեւարար գործելու  
յատկութիւնով և իրենց պաշտօնը կը կա-  
տարին, հոգ չէ թէ անհասարակ անոնց մա-  
սին կը խորհի կամ ոչ, քնացած է թէ  
արթուն:
3. Երիտասարդներու իշխուելն մեծ  
պատճառը իրենց միջավայրն է. հետեւա-  
բար պէտք է հոգ տանել որ՝ ա) միտքը  
մաքուր պահուի, զգոյշ ըլլալ անմաքուր  
ընթացումներէ, զրոյցներէ, տեսարաննե-  
րէ: Փոխանակ կրակը բաժակին քով  
դնելու և լանալու որ չընկի, պէտք է  
զայն հետո պահել կրակէն. բ) որպէսզի  
մեր միտքերը այդ ուղղութեամբ չխորհն  
և մտքիները չփորձուին, պէտք է մեզ  
բարձրացնող և մեզի օգտակար դրողունք  
հայթայթել. միտքը և մարմին չեն կրնար  
ձոյլ և անգործ մնալ:
4. Աւելի վերին է աշխատիլ որ մարդ  
երբէք չիջնայ փորձութեան մէջ: Բայց ե-  
թէ ինկած է ձուռ ճամբու մը մէջ, աշ-  
խատելու է ուղղել այդ ճամբան, միայն  
քիչ մը փափաք, կամք, ջանք ի գործ  
դնելով:

ՏԵՄԵՐՈՒՄՆԵՐԻ  
(Հայրենիք)

ՆՈՐ ՍՏՍՏՈՒՄԸ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

L'Orient illustré անունով պատկերա-  
գարը Թերթ մը սկսած է հրատարակուիլ  
Փարիզի մէջ: Զրդ Թիւր (Նոյեմբեր) որ  
ստացած ենք (առանց տուած վնելու 1  
Թիւր), կը պարունակէ բաւական հետա-  
քրքրական պատկերներ և յօդուածներ:  
Հայերին վերաբերելու բաժնին մէջ կը  
տեսնենք Ս. Տ. Գուրգէն Թամազեանի  
և Մելիք Ս. Գալիթի մէջ ստորագրուած  
յօդուածներ: Այս վերջին լուսանկար  
պատկերն ալ դրուած է:  
Տարեկան բաժնորդական է Ֆրանսայի  
համար 20 ֆր., վերցմանց 11 ֆր.:  
Ջինուրականներին համար տարեկան 10  
և վերցմանց 5 ֆր.: Արաստահմանի  
համար տարեկան 25 և վերցմանց 13  
ֆր.: Հասցէն 7, rue Nouvelle, Paris(9e):

ԵՍԵՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԿԸ ԽԵՂԵՐՈՒԹԻ

Քէմախցի Մարկոս Տէր Թովա-  
կիմեան որ կը բնակի այժմ Կրէտէի  
Իթիմիո քաղաքը, կը ինդրէ որ  
եթէ Բագրատի Ս. Նշան վանքին  
վրայ լուր անհեցող կայ, հաճի իմա-  
ցրենք Ա. ըմբիկալի միջոցով:

ԾԱՆՈՒԹԻՒՆԵՐ

- Գևորգ Մարտիկ Քրիստոսեանի թիւ  
ԲՈՒՏՐՆԻ Ի ՀՅՍ Գրքոյր Լուսն  
ուրէն ս. զ. (Բուսնու ս. ս. մ. ս.  
սիրութիւն). Գր. 1 ֆ. 25 (1,35):
- Գործնական Վերականգնութիւն Ֆրանսե-  
րէն լեզուի Անի ոճով. Դրդ սպար. յա-  
ւելուածներով. 1910: Ա. մաս 1 ֆր. և 50  
(ճարտիքով. 1 ֆր. և 70) սնդմ.:
- Նայն Բ մաս 1 ֆր. և 40 սնդմ. (ճ. 1 ֆր.  
և 50) սնդմ.:
- Վարժուածին գաղղ խական լեզուի Հա-  
մառտ քերականութիւն և Ֆրանսերէն ըն-

տիր հասուածներ՝ իրենց բազմաթիւ մէկ  
տեղ. 1 ֆր. և 40 սնդմ. (ճ. 1 ֆր. և 60  
սնդմ.:

Հ. Ա. Գուտարձեան. ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱ-  
ԲԱՆ ՆՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ և Ե. Կրորդ տիւն  
գործող համար ԱՅԻՆՍՏԱՆ. Մասն  
1. Վեհեաթի 1913: (Ընտիր հասուած  
ներ պարունակող պատկերապարզ  
գիրք մ'է ընթերցանութեան համար)  
Գր. 1 50 (1,70):

Նայն Մասն Բ. (ՆՅԻՆՍՏԱՆ «Նոր  
Ընթերցարան» այս Բ. մասը 320  
երեսներէ սովորած ստասր հասոր  
մ'է որ կը պարունակէ զանազան  
գրող էսաների զըլի արդիւնքներէն  
ընտիր հասուածներ ընթերցանու-  
թեան համար, ստասր որ կամ որ  
ձակ, և գորդարուած է բարձր  
գեղաստիպ պատկերներով, սմանք ու-  
նա որ, շատերն ալ կը ընթերցանեն  
հայտնի դէպքեր և հետաքրքրաշարժ  
տեսարաններ: Ո միայն գործող  
հոռնեթի համար ընտիր ընթերցարան  
մ'է, այլ և զըրկան ճշակ ունեցող  
ամէն անձի ընթերցանութեան քարտի):  
Գր. 2,80 (ճ. 3,20):

Համառոտ Արթուրեան հայերէն պատ-  
կերագրագ. 0,20 (0,25):

Եղիազար Մոռառեան. Գրեական  
Պատմութիւն Պրշակ Ի. և անոր Պայ  
որդուին (Հայոց պատմութեան մէկ  
կարեւոր կէտին վրայ քննադատական  
տեսութիւն մ'է որի համար Մ. Պրա-  
բեկեան գրած է թէ «Հեղինակին այդ  
ձեռնարկութիւնը պատիւ է բերում  
իրան և այն ազգին, որին պատկանում  
է պատմութիւնը»): 2 ֆր. 50 (2,70):

Հ. Երեմեան. ՊԱՏԿԵՆՆԵՐ Արձա-  
յար 1909-1913 (Արարչան ծած-  
կանունով զանազան թիւերի մէջ Հ.  
Ս. Երեմեանի բնագործարան սնդմ  
գրածներէն ընտիր հասարած մ'է  
230 երեսներէ բնագործ և գեղար-  
թիկ վրայ սպարած) 4 ֆր. (4,30):

Carte de l'Arménie ancienne. Dressée  
par K. J. Basmadjian, professeur d'his-  
toire. Paris 1916.

(Հայաստանի պատմութեան զուգընթաց  
պէտք է հետաքրքրուի նաև հին Հայաս-  
տանի քարտէսով որովհետև պատմութիւնը  
առանց աշխարհագրութեան չէ կարելի  
դիւրաւ ըմբռնել: Բրոք. Բոստանեան այդ  
մասին դիւրութիւն մ'ընծայած է այժմ  
հրատարակելով հին Հայաստանի տաճա-  
րին և միանգամայն ինչամով պատրաստ-  
ւած քարտէս մը):  
Գրեն է Մարտիկի մէջ 75 սնդմ,  
Մարտիկէն դուրս 85 սնդմ.

Frédéric Macler. — LA MUSIQUE  
EN ARMÉNIE. Paris. 1917.  
(1917 յունվար 26ին, Փարիզի Ecole  
des Hautes Etudes Socialesի մէջ, — 16,  
rue de la Sorbonne — հայ երաժշտու-  
թեան մասին բանախօսութիւն մ'ըրած է  
Արեւելեան լեզուների վարժարանի հայերէնի  
դասախօս Մաքլէր որ շատ հմտութեամբ  
հայ երաժշտութեան պատմական ու գը-  
նահատուէն ըրած է իր այդ բանախօսու-  
թեան մէջ, օգտուելով անուանի երա-  
ժշտագետ Տ. Կոմիտաս վարդապետի  
անձամբ իրեն հարողած տեղեկութիւն-  
ներէն:  
Պէտք է տարածել այս գրքոյը ֆրան-  
սագէտ Երոպացիներին մէջ, ցոյց տալու

համար Թէ Հայ ժողովուրդը ոչ միայն կո-  
տորուող ժողովուրդ մը եղած է, այլ եւ  
իր ուսումնական յաւաքը ինքնուրու  
գեղարուեստով փայլած ու փայլող ժո-  
ղովուրդ մը Արեւելքի մէջ): Գր. 1,15  
(1,30):

Docteur T. Aslan. — TRAIT D'U-  
NION. ARMÉNIE-FRANCE, leurs rela-  
tions depuis les temps les plus reculés.  
Vannes. 1917.

(Պրոպագանդի յարմար գիրք մը ըն-  
տիր տպագրութեամբ որ Հայաստանի  
հին ու նոր պատմութեան վրայ տեղե-  
կութիւններ կուտայ խիստ հետաքրքրա-  
կան աւանդութիւններով համեմուած.  
կը Թուէ յատկապէս Հայաստանի ունեցած  
յարաբերութիւնները Եւրոպայի եւ մա-  
նաւորապէս Ֆրանսայի հետ: Գր. 3 ֆր  
20 սնդմ. (3,50):

Haic & Belus. A National Dram.  
composed by M. J. Zorab. Calcutta.  
1895. Գր. 2,40 (2,50):

L'ARMÉNIE et la Question arméni-  
enne par Mikael Varandian, avec une pré-  
face de Victor Bérard.

(Այս գիրքը իր ամփոփ համառոտու-  
թեան մէջ կը բովանդակէ հայ մտքի,  
սրտի եւ կորովի վտել եւ հարստացող ար-  
տայալուծիչները որոնք կրնան շատ  
բան ուսուցանել հայ ցեղի եւ Հայաստա-  
նի իսկութեան անճանճ շատ մը օտա-  
րակներին: Այս տեսակետէն իսկ կար-  
ժէ մեծ չափով տարածել ֆրանսագէտ  
օտար շրջանակներին մէջ: 1,20 (1,40):

La Défense héroïque de Van (Arménie)  
traduit de différents journaux arméniens  
par M. G. Edition de la revue « Dros-  
chak ». Genève. 1916.

(Վանի հերոսական դիմադրութիւնը որ  
հայ պատմութեան ամենաուրախ զըր-  
ւագներէ մին կը կարգէ, Եւրոպացիներէ  
շատ քիչերն ճանաչած է. ուստի ֆրանսե-  
րէն այս հրատարակութիւնը որ գարդա-  
րած է նաեւ կամաւորները եւ ինքնա-  
պաշտպանութեան մարտիկների պատ-  
կերներով, խիստ յարմար է պրօպագան-  
դի համար: Կարծէ որ Հայեր կարդան  
զայն եւ կարգացնեն ֆրանսագէտ օտա-  
րակներին որոնք Հայերը լոկ կոտոր-  
ուող խեղճ ժողովուրդ մը կը ճանչնան ե-  
ոչ դիւցազն եւ ըմբոստ ինքնապաշ-  
պաններ): 1 ֆր. 20 (1 ֆր. 40):

Մ. ՓՈՐՏՈՒԿԱՆԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

	Ֆր. սնդմ.
Ա. Հայ զինգագրուելի մը Բ. սպար.	40
Բ. — Ը. (Սպարած)	
Թ. «Արմենիայի յաղաքար (Ա. տարի)	1,40
Ե. Վրժ	20
ԺԱ. Թամա Բոցարիս	20
ԺԲ. Նալչիկի Մ. Փորթուգա- լեան գրած օտաւար- ութիւն	15
Ժ. Մր պուկար հայրենասիր (Պուկարի Յեղափո- խութեան ծագման պատ- մութիւնը)	1,40
ԺԳ. Մր՝ պարիք	20

Մարտիկէն դուրս զրկելու փոստի ծախ-  
քը կը վճարուի հրատարակողէն:  
**ՏՆՕՐԷՆ. — ԻՄՔԱԳԻՐ  
Մ ՓՈՐՏՈՒԿԱՆԱՆ  
Մ ԱՐՄԵՆԻԱ**  
Հայերէն Տպարան Մ. Փորթուգալեան  
Le Gérant: François CARRIERE.  
Marseille. — Imprimerie du Midi